ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Մանկավարժի գործունեությունը տարրական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Դասվար (Մայրենի, Մաթեմատիկա)
ՀԵՂԻՆԱԿ	Ամարյան Հայարփի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ակների միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….....……3

Գլուխ 1. Տարրական դպրոցի ուսուցիչը

1.1 Ուսուցչի մասնագիտական արժեքային համակարգը …….……5

1.2 ՈՒսուցչին ներկայացվող մանկավարժական պահանջները ……..7

Գլուխ 2. Ուսուցման գործընթացը տարրական դպրոցում

2.1 Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում ……9

2.2 Դիդակտիկ խաղերի դերը կրտսեր դպրոցի ուսուցման գործընթացում…...11

Գլուխ 3. Դաստիարակության գործընթացը տարրական դպրոցում

3.1Դաստիարակության գործընթացի էությունը ……..……...…13

3.2 Հաղորդակցումը տարրական դպրոցում …….……..……16

Եզրակացություններ …….19

Օգտագործած գրականության ցանկ …….……20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական կրթության մանկավարժությունը մանվարժության մի ճյուղն է, որի ուսումնասիրության առարկան տարրական դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի օրինաչափությունները, սկզբունքները, խնդիրները, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցներն ու ձևերն են։

Այն շատ կարևոր օղակ է հանրակրթության համակարգում, որի նպատակը կրտսեր դպրոցականների մտավոր, հոգեկան գործընթացների, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության զարգացումն է, հայեցի հոգեկերտվածքի և արժեհամակարգի ձևավորումը։

Մեր հասարակությունը տարրական դպրոցի ուսուցչին է վստահում իր համար ամենաթանկը՝ մեր փոքրիկ քաղաքացիներին և մեր երկրի ապագան, ինչպիսին մանկավարժի աշխատանքի արդյունքն է, այդպիսին էլ կլինի մեր հասարակության վաղվա օրը։

Մանկավարժության այս ճյուղը միշտ գտնել է քննարկումների և ուսումնասիրությունների առանցքում, քանի որ ժամանակին և երեխաների հոգեբանությանը համահունչ առաջ ընթանալու համար պետք է անընդհատ ուսումնասիրել, զննել, վերլուծել և կատարելագործել կրթական համակարգի այս օղակը, ինչն է մեծապես պայմանավորված է տարրական դպրոցում մանկավարժի գործունեության օպտիմալ կազմակերպմամբ։

Վերը նշված փաստերով էլ հենց պայմանավորված է թեմայի **արդիականությունը**։

Աշխատանքի **նպատակն** է վերլուծել և բացահայտել մանկավարժի գործունեության առանձնահատկությունները տարրական դպրոցում։

Նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետազոտական աշխատանքի կատարման հետևյալ խնդիրները.

- **վերլուծել** ուսուցչի արժեքային համակարգը,
- **ուսումնասիրել** տարրական դպրոցի մանկավարժի մասնագիտական կոմպետենտությունները,
- **ուսումնասիրել** մանակավարժի գործունեությունը տարրական դպրոցում,

- **հետազոտել** մանկավարժի դերը տարրական դպրոցի ուսուցման և դաստիարակության գործընթացում:

Աշխատանքը **բաղկացած է** ներածությունից, երեք գլխից, եզրակցություններից և օգտագործած գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում վերլուծվում են տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական և որակական հատկանիշները:

Երկրորդ գլխում անդրադարձ է կատարվում տարրական դպրոցի ուսուցման գործընթացում մանկավարժի գործունեությանը:

Երրորդ գլխում քննարկում է մանկավարժի գործունեությունը տարրական դպրոցի դաստիարակության գործընթացում:

Աշխատանքն ամփոփված է եզրակացություններում:

ԳԼՈՒԽ 1.

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉԸ

1.1 Ուսուցչի մասնագիտական արժեքային համակարգը

Մանկավարժական գիտության զարգացումը ընթանում է համակարգային, գործառնական, կոմպետենտային, անձնակենտրոն մոտեցումների համատեքստում, որտեղ մոտեցումը հանդես է գալիս մանկավարժական գործունեության՝ որպես մանկավարժական ամբողջական գործընթացի կառուցման և կառավարման կարևոր գործոններից մեկը, որն ապահովում է նրա բոլոր տարրերի արդյունավետ փոխազդեցությունը: Համակարգի տակ սովորաբար հասկացվում է բարդ օբյեկտ, բազմամակարդակ կրթություն՝ կազմված բազմաթիվ տարրերից, որոնք փոխկապակցված են, գտնվում են փոխհարաբերությունների մեջ և ձևավորում են ամբողջականություն: Ինքը՝ մարդը բարդ բազմամակարդակ համակարգ է: Բնականաբար նրա կրթության գործընթացն էլ բարդ, բազմատեսանկյուն և բազմագործոն, և այն, անշուշտ պետք է համակարգային բնույթ կրի:

Ուսուցչի մանկավարժական գործունեությունը՝ ուղղված ամբողջական մանկավարժական գործընթացի կազմակերպմանը, դա համակարգ է: Վերջապես առանձին պարապունքներն էլ կարելի է դիտել համակարգի տարր և միաժամանակ որպես նրա գործունեության ենթակա համակարգ:

Ցանկացած մանկավարժական համակարգի կենտրոնում սովորողը և ուսուցիչն են, որոնք հադես են գալիս որպես այդ համակարգի ամբողջական սուբյեկտներ, և որոշում են համակարգի գործունեության նպատակները, կրթության բովանդակությունը:

Ցանկացած մակարդակի մանկավարժական գործունեություն սկսվում է հայտորոշումից՝ մանկավարժական համակարգի սկզբնական վիճակի ուսումնասիրությունից և վերլուծությունից, սովորողների հնարավորությունների և իր իսկ սեփական ներուժի ուսումնասիրությունից և վերլուծությունից, ինչպես նաև նրա զարգացման ենթադրվող արդյունքների վերլուծությունից:

Մանկավարժի նպատակների ընդհանուր կառուցվածքը իրենից ներկայացնում է հետևյալը՝ համապետական նպատակներ, կոնկրետ կրթական հաստատության

նպատակներ, կոնկրետ դասարանի և աշակերտի ուսուցման ու դաստիարակության նպատակներ:

Համապետական նպատակները պետական հանրակրթական չափորոշիչներով ձևավորված սոցիալական պատվերն է հանրակրթական համակարգին:

Ուսուցիչ մասնագիտական-մանկավարժական ուղղվածությունը դիտվում է որպես գերիշխող դրդապատճառների համակարգ՝ մասնագիտական գործունեության մղող հետաքրքրություններ, պահանջմունքներ, հակումներ:

Մանկավարժական կոչման և մասնագիտական ուղվածության հիմք է հանդիսանում ուսուցչի արժեքային համակարգը՝ ուղղված մանկավարժական գործունեությանն ու իրեն, որն ամրապնդված է նրա մասնագիտական- արժեքային կողմնորոշումներով:

Մանկավարժի արժեքային կողմնորոշումներում կարելի է առանձնացնել հարաբերությունների առաջատար երեք տիպեր՝ ուղղված մասնագիտական գործունեության՝

- Մանկավարժական աշխատանքին (տվյալ գործունեության նպատակների և անձնային իմաստի գիտակցումը, նրա հասարակայնորեն անհրաժեշտ լինելու ըմբռնումը, նրա արդյունքներում խորը շահագրգռվածությունը, դասավանդվող առարկայով տարված լինելը),
- Սովորողների անձին (սովորողի անձի անվերապահորեն ընդունումը որպես բարձրագույն արժեքի և նրա անձի զարգացման ուղղվածությունը),
- Ուսուցչի անձին՝ ինքն իրեն՝ որպես մանկավարժի (մասնագիտական իդեալի և դրա ԵՍ-ի՝ որպես իր մասին պատկերացումների ամբողջության՝ անձնային և մասնագիտական որակների առկայությամբ):

Ուսուցչի մասնագիտական-արժեքային կողմնորոշման ամբողջական համակարգում հարաբերությունների բոլոր տիպերը սերտորեն փոխկապակցված են, սակայն իմաստակողմնորոշիչ է հանդիսանում վերաբերմունքը սովորողի անձի նկատմամբ[1]:

[1] Հակոբյան Ա. Ա., Մանավարժական գործունեության հիմունքներ, Դասախոսությունների ժողովածու: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, էջ 78-80:

1.2 Ուսուցչին ներկայացվող մանկավարժական պահանջները

Ուսուցիչը պետք է խորապես տիրապետի այն ուսումնական առարկան, որ ինքն է դասավանդում, տիրապետի գիտական մակարդակով: Ու երբեք չպետք է բավարարվի ձեռք բերած գիտելիքներով, իր ունեցածով, այլ անընդհատ համալրի իր գիտելիքները, ընդարձակի մտահորիզոնը, ունենա մասնագիտական (պրոֆեսիոնալ) խոսք և մտածողություն, այլապես նա չի գտնվի այն բարձրության վրա, որտեղ մշտապես կանգնած է մեծ անուն վաստակած ուսուցիչը:

Ուսուցիչն իր գիտելիքները հարստացնելու նպատակով պետք է օգտագործի ժամանակակից գիտական տեղեկատվության հնարավորությունները, նրա հզոր «հեղեղից» ջոկի, ընտրի ռացիոնալը (նպատակահարմարը), յուրահատուկը, կարևորը և այդ ուղիով նույնպես հարստացնի իր գիտելիքների պաշարն ու միաժամանակ իր սաներին ուսուցանի, թե զանգվածային տեղեկատվությունից, որպես գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ՝ ինչը վերցնել, ինչը՝ ոչ: Ու այս բոլորը մեկ նպատակի համար. այն է՝ անընդհատ համալրել իր և իր աշակերտների գիտելիքները: Անվանի դիդակտ Մ. Ն. Սկատինը գրում է. «Գիտելիքները հայտնագործվում են գիտելիքներով»: Այո, դա ճշմարտություն է, եթե մտապահված գիտելիքներ չկան, ավելորդ է խոսել նոր գիտելիքներ հայտնագործելու մասին: Ահա թե ինչու Նապոլեոնը գիտելիքը համարում էր իր խելքի բուրգ:

Ուրեմն, տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական պատարաստվածությունն ու բազմակողմանի կրթվածությունը և նրա ղեկավարությամբ աշակերտների դեպի գիտելիքների աշխարհ կողմնորոշումը արդի ժամանակաշրջանում դառնում է հասարակական, պետական պահանջ, կենտրոնական հիմնախնդիր, որի լուծումը պայմանավորված է դպրոցի դերն ու ցավը գիտակցող ուսուցիչների բարեխիղճ գործունեությամբ:

Տարրական դպրոցի ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի զարգացվածությունը հատուկ կարևորություն են ներկայացնում 21-րդ դարում: Չէ որ այս դարում, կյանքի բոլոր ոլորտներում, կիրամայեն գիտությունն ու տեխնիկան: Ուրեմն, ժամանակակից ուսուցիչը պարտադիր կարգով պետք է տիրապետի ուսուցման տեխնիկական միջոցների գործադրման եղանակներին և

նույնը ուսուցանի նաև իր աշակերտներին, նորովի լուծի նրանց կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները:

Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր այդ ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ համալրի նրանց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Այդ հիմնախնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները օպտիմալացնելու, նոր մեթոդներ հայտնագործելու, հին մեթոդները կատարելագործելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման տեխնիկական միջոցները լայնորեն օգտագործելու միջոցով: Այլ կերպ ասած, ուսուցիչը դպրոցականների ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը պետք է բարձրացնի նոր աստիճանի՝ օգտագործելով դրանց տեխնոլոգիաների ընձեռնած բոլոր հնարավորությունները:

Տարրական դպրոցի ուսուցիչը պետք է լինի բարեհոգի, ներող, գթասիրտ, կարեկցող, զուսպ, ունենա հոր և մոր սիրտ, լինի լավագույն խորհրդատու, օգնող, սատարող, հասնող, իր մեջ ունենա աշակերտներին, դեպի իրեն ձգելու հատկություն և «կախարդող» ուժ… ու մշտապես հիշի, որ ինքը ոչ միայն պիտի ունենա այդ որակները, այլև պատրաստակամ լինի դրանք կատարելագործելու, հակառակ դեպքում տանուլ կտա նաև ունեցածը:

Տարրական դպրոցի ուսուցիչը ստեղծագործական մոտեցում պետք է ունենա իր գործի նկատմամբ, ինքնակրթության և իրքնադաստիարակության միջոցով պետք է անընդհատ կատարելագործի իր իմացությունն ու անձնական որակները, ուսումնասիրի ուսուցման և դաստիարակության առաջավոր փորձը, հմտորեն կազմակերպի դպրոցականների արտադասարանային և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները[2]:

[2] Ամիրջանյան Յ. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան, 2005, էջ 83-86:

ԳԼՈՒԽ 2.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

2.1 Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում

Հայտնի է, որ երեխաները ավելի արդյունավետ են սովորում, եթե հնարավորություն են ունենում ընտրություն կատարելու, ակտիվ համագործակցելու միմյանց հետ, շարժվելու իրենց հետաքրքրություններով: Օգտագործելով դասավանդման տարբեր ձևաչափեր՝ մենք ցանկանում ենք երեխաների մեջ սերմանել սեր, ձգտում դեպի գիտելիքը, դաստիարակել ստեղծագործ և սոցիալապես պատասխանատու անհատներ: Կրթական բարեփոխումները շատ ավելի հաջող կստացվեն, եթե յուրաքանչյուր մանկավարժ իր ամենօրյա դասը հարստացնի նորարարություններով՝ ներդնելով սեփական փորձն ու գիտելիքները: Մենք՝ մանկավարժներս, հաճախ սովորեցնում ենք այնպես, ինչպես սովորեցրել են մեզ՝ հաճախ հիմնվելով դասավանդման արդեն ընդունված ավանդական մեթոդների վրա՝ անտեսելով ժամանակակից ուսումնասիրություններն ու տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս աշակերտներին լիարժեք ներգրավել դասի մեջ: Չպետք է մոռանալ Սուխոմլինսկու խոսքերը. «Կա հաջողություն՝ կա սովորելու ցանկություն», որը շատ ավելի տեղին է տարրական դպրոցում, որտեղ երեխան չի կարողանում հաղթահարել դժվարությունները, և ամեն մի ձախողում նրա համար վերածվում է անձնական ոբերգության:

Երեխաներին կրթելիս պետք է հաշվի առնել, որ նոր սերունդը, որը մեծացել է բջջային հեռախոսների և համակարգիչների հետ շփվելով, պահանջում է մշտական տեսողական խթան, արագ և ճկուն ուսումնական գործընթաց: Ներկայիս դպրոցականը սովոր է համակարգչային խաղերի և հեռուստատեսային գունեղ տեսահոլովակների: Նրանք նման ձևով էլ ընկալում են շրջապատող իրականությունը: Իսկ դա նշանակում է, որ ժամանակակից մանկավարժը, այս ամենը գիտակցելով, առավելագույն արդյունք ստանալու համար դասի ընթացքում պետք է կիրառի թվային տեխնոլոգիաներ, գրաֆիկական և անիմացիոն պատկերներ, ձայնային ազդեցություններ: Ինտերակտիվ տեխնոլոգիաներն ակտիվ ներթափանցում են մեր առօրյան: Դրանք օգնում են մարդկանց հնարավորինս լավ

բացահայտելու իրենց ստեղծագործական հնարավորությունները, աշխատանքում և կրթության մեջ ավելի հաջողակ դառնալու և իրենց շրջապատող աշխարհն ավելի գունեղ դարձնելու:

Ժամանակակից մանկավարժը ձգտում է ինտերակտիվ տեխնոլոգիաներն ավելի արդյունավետ օգտագործել դասերի ժամանակ, յուրացնել ինտերակտիվ տեխնոլոգիաների նորանոր հնարավորությունները: Մանկավարժը պատրաստի գիտելիքներ կրողից վերածվում է իրենց աշակերտների ճանաչողական գործընթացի կազմակերպչի: Այս ճանապարհը ջանքերի մեծ գործադրում է պահանջում:

Ինտերակտիվ գրատախտակը օգտագործելով տարրական դասարաններում այն մեզ թույլ է տալիս.

- ակտիվացնել աշակերտների ճանաչողական գործունեությունը
- աշակերտներին անհատական մոտեցում ցուցաբերել
- բարձրացնել կրթության արդյունավետությունը
- դյուրին դարձնել նյութի ընկալումը
- բարձրացնել դասերի գեղագիտական մակարդակը (երաժշտություն, անիմացիա, ձայնային ազդանշաններ)
- աշակերտների մեջ զարգացնել ժամանակակից թվային տեղեկատվական աշխարհում կողմնորոշվելու ունակությունները:

Տարրական դասարանների աշակերտները համարձակ են աշխատում ինտերակտիվ գրատախտակով: Նրանք չեն վախենում գրատախտակին մոտենալուց և սխալվելուց, քանի որ սխալվելու դեպքում էլ հետաքրքիր գործիքների օգնությամբ գործողությունը չեղյալ են համարում կամ ջնջում են հրաշագործ ռետինով: Այդ պատճառով երեխաներն իրենց ավելի վստահ են զգում ինտերակտիվ գրատախտակի մոտ: Անհրաժեշտ է նշել, որ տարրական դասարաններում միայն ինտերակտիվ գրատախտակից օգտվելով՝ արդյունավետ ուսումնական գործընթաց չես կարող կազմակերպել: Պետք է կարողանալ համապատասխան նյութեր ձեռք բերել կամ էլ ինքնուրույն դրանք պատրաստել:

Չինական իմաստությունն ասում է. «Մի վախեցիր, որ չգիտես, վախեցիր, որ չես սովորի»: Մարդու համար երբեք ուշ չէ սովորելը: Մի վախեցեք նոր գիտելիքներից, այլ

ընդհակառակը, ձգտեք դեպի դրանք: Ձգտումը դեպի ինքնուսուցումը ժամանակակից մանկավարժի յուրահատկության չափանիշն է[3]:

2.2 Դիդակտիկ խաղերի դերը կրտսեր դպրոցի ուսուցման գործընթացում

Տարրական դպրոցում խաղի ժամանակ (խաղալիս) երեխաները ոչ միայն իրականություն են դարձնում իրենց ձգտումները, երևակայածն ու տպավորությունները, այլև համոզվում են գիտելիքների անհրաժեշտության և խաղի ժամանակ հաղթելու համար դրանց պարտադիր իմացության մեջ՝ դրանով ոչ միայն բավարարվելով իրենց հիմնական հոգեկան պահանջմունքները, այլև ձեռք բերելով ուսումնական համոզմունքներ, ինքնագնահատական:

Խաղերը մեծ դեր են կատարում որպես զարգացման անբարենպաստ միջավայրի ազդեցությունները կանխող և դրանց հետևանքները շտկող, հոգեկան և մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին առողջ մանկական հասարակության մեջ ներառող միջոց: Մասնավորապես ներառական կրթություն իրականացնող կրտսեր դպրոցում խաղերը նպաստում են սովորողների թույլ արտահայտված ճանաչողական ունակությունների ակտիվացմանը, մտավոր գործունեություն ծավալելու նկատմամբ կայուն հետաքրքրության դաստիարակմանը, ուսումնական արդյունավետ գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ հոգեկան գործընթացների կատարելագործմանը:

Ժամանակակից մանկավարժները, դիտարկելով խաղի բարենպաստ ազդեցությունը երեխաների ճանաչողական գործունեության վրա, գտնում են, որ խաղը ոչ այնքան նոր գիտելիքներ ձեռք բերելու միջոց է, որքան որ «երեխայի գիտելիքները մակերեսային ճանաչման մակարդակից փորձի ընդհանրացման մակարդակ տեղափոխելն է»:

Տարրական դպրոցում երեխաների զարգացմանը նպաստելու նպատակով կազմակերպվում են խաղերի հետևյալ տեսակները՝ մտավոր, շտկողական, ուսուցողական (դիդակտիկ), շարժուն, հետաքրքրաշարժ, տրամաբանական: Սակայն ցանկացած դասակարգում պայմանական է, որովհետև, օրինակ՝ շարժուն խաղերն

[3] «Մխիթար-Գոշ» գիտամեթոդական հոդվածներ, 2020/ N2, էջ 301-306:

իրենց մեջ պարունակում են մտավոր զարգացում ապահովող հնարավորություններ, ուսուցողական խաղերը՝ որքան ասես շտկողական նպատակներ և այլն: Նշանակում է՝ կարևորը ոչ այնքան ընտրված խաղի տեսակն է, որքան նրա հնարավորությունների առավելագույն օգտագործումը: Օրինակ՝ շարժուն խաղերի ժամանակ երեխաները ոչ միայն բավարարում են իրենց շարժման պահանջմունքը, ծախսում են ուսումնական պարապմունքների ժամանակ կուտակված էներգիան (այսինքն՝ բեռնաթափվում են), այլև ձեռք են բերում ինքնուրույնություն, նախաձեռնողականություն, խաղավարին ուշադիր լսելու և նրա ցուցումները ճշգրիտ և նախատեսված հաջորդականությամբ իրականացնելու ունակություններ, ձևավորում են ուշիմություն, աշխատասիրություն, համառություն, ինչպես նաև՝ խաղընկերների հետ համագործակցելու, իրենց քայլերը նրանց հետ համաձայնեցնելու կարողություններ և այլն: Ուրեմն՝ ճիշտ կազմակերպված խաղերը նպաստում են ինչպես ուսումնական գործունեության համար անհրաժեշտ համալիր ունակությունների, այնպես էլ անձնային որակների ձևավորմանը:

Ընդունելով Լ. Ս. Վիգոտսկու այն տեսակետը, որ երեխաների մտավոր զարգացման ուղղությամբ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մտավոր և զգացմունքային գործընթացների միասնության ապահովում՝ Մ. Է. Վայները նշում է. «…առաջին հերթին երեխայի զարգացման գործընթացում անհրաժեշտ է պահպանել նրա զգացմունքային և մտավոր ներուժի ներդաշնակ հավասարակշռությունը… Երկրորդ՝ անհնար է երեխայի լիարժեք մտավոր զարգացում, եթե զգացմունքների ձևավորաման անբավարավածություն կա: Զգացմունքները չեն կարող փոխարինվել, ճանաչվել մտավոր կարողություններով, քանզի դրանց բացակայությունը կամ զգացմունքային ոլորտի աղքատությունը կհանգեցնեն մտածողական գործընթացների պասիվության»[4]:

[4] Գյուլամիրյան Ջ., Խաղալով սովորենք, Երևան, 2009, էջ 14-16:

ԳԼՈՒԽ 3

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

3.1 Դաստիարակության գործընթացի էությունը

Ժամանակակից տարրական դպրոցի առջև դրված են դաստիարակությանը համընդհանուր, նպատակային բնույթ տալու և դպրոցականի բազմակողմանի և ամբողջական դաստիարակությունն ապահովելու խնդիրներ:

Կրտսեր դպրոցականի դաստիարակության խնդիրներն են՝

♦տարրական դպրոցում իրականացվող դաստիարակության գործընթացն ուղղել կրտսեր դպրոցականի անձի ամբողջական ձևավորմանը՝ հաշվի առնելով նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակը,

♦կրտսեր դպրոցականներին հաղորդակից դարձնել հասարակական, հոգևորբարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, գիտությանը, արվեստին, մշակույթին,

♦ձևավորել կրտսեր դպրոցականների արժեքային կողմնորոշումները,

♦կազմակերպել աշակերտների իմացական գործունեությունը՝ ապահովելով նրանց հասարակական գիտակցության զարգացումը,

♦զարգացնել ինքնահարգանքի, սեփական բարձրարժեքության գիտակցումը, դաստիարակել բարյացակամ վերաբերմունք շրջապատի մարդկանց /թե՛ մեծերի, թե՛ տարեկիցների/նկատմամբ, մշակել մարդկանց հետ վստահելի հարաբերություններ ստեղծելու, երկխոսություն ու հաղորդակցում վարելու կարողություններ,

♦սիրո և հարգանքի միջոցով բավարարել երեխայի պահանջմունքները, ձևավորել մանկական հասարակության մեջ իր դերի և սոցիալական կարգավիճակի գիտակցում, երեխայի շուրջ ստեղծել բարենպաստ պայմաններ և այլն:

Տարրական դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի բովանդակության մեջ կարևորվում են նաև տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, դաստիարակությունն ու կրոնաբարոյական արժեքների ձևավորումը: Դաստիարակության բովանդակության մեջ, բնականաբար, ընդգրկվում է նաև

գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, ինչպես նաև անձի վարքագիծը։

Դաստիարակության սկզբունքներն ընդհանուր դրույթներ են, որոնցում արտահատված են դաստիարակության գործընթացի բովանդակության, մեթոդների կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները։ Դրանք են՝

♦պարտադիրությունը,

♦համալիր բնույթը,

♦նույնանշանակությունը (համարժեքությունը)։

Դաստիարակության ժամանակակից համակարգը ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով.

♦երեխայի բարձրարժեքություն,

♦դաստիարակության անձնային-հասարակական ուղղվածություն,

♦դաստիարակության կապը կյանքի և աշխատանքի հետ,

♦անձի դրական որակների վրա հենվելը,

♦դաստիարակության մարդասիրական բնույթը,

♦անձնակենտրոն մոտեցումը,

♦դաստիարակչական ներգործությունների ձևերի միասնությունը,

♦երեխան իր դաստիարակության գործընթացի սուբյեկտն է։

Դաստիարակության մեթոդները դաստիարակողի և դաստիարակվողի համագործակցության հիմնական եղանակներն են։ Առանձնացնում են դաստիարակության մեթոդների չորս խումբ՝

1. անձի գիտակցության ձևավորման մեթոդներ,

2. վարքի և գործունեության կազմակերպման մեթոդներ,

3. խթանման մեթոդներ,

4. ինքնադաստիարակության մեթոդներ։

Ընդ որում՝ չկան լավ կամ վատ, դյուրին կամ դժվար, արդյունավետ կամ անարդյունավետ մեթոդներ։ Մանկավարժական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է դաստիարակության տվյալ մեթոդի ճիշտ և տեղին կիրառմամբ։

Մանկավարժական գործընթացում դաստիարակության մեթոդների կիրառման արդյունավետության հարցում կարևոր է տարրական դպրոցի ուսուցչի

մանկավարժական վարպետությունն ու փորձը։ Նա պետք է ունենա բծախնդիր դիտողականություն, ուսումնասիրող, զննող ոգի, որպեսզի կարողանա երեխային ուսումնասիրել, բացահայտել, ճանաչել և ըստ այդմ էլ ընտրել ու կառուցել մանկավարժական գործընթացը։ Կրտսեր դպրոցի դաստիարակչական գործունեության գլխավոր խնդիրներից է աշակերտների և նրանց շրջապատող մարդկանց (ընկերներ, ծնողներ, ուսուցիչներ, բարեկամներ և այլք), շրջակա միջավայրի (բուսական և կենդանական աշխարհ), ինչպես նաև հոգևոր արժեքների միջև շփման մշակույթի ձևավորումը։ Վերոհիշյալ խնդիրների լուծման միջոցներն են ծնողական ժողովները, հանդիպումները, իրադրային և շարժական խաղերը, թատերականացված բեմականացումները, զրույցները, քննարկումները, մրցույթները, օլիմպիադաները, կրտսեր դպրոցականների աշխատանքների ցուցահանդեսները, էքսկուրսիաները և այլն։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ տարրական դասարաններում են ձևավորվում սովորողների այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ համագործակցելը, աշխատասիրությունը, ինքնուրույնությունը, հաղորդակցումը, հետաքրքրասիրությունը, կազմակերպվածությունը, ազնվությունը և այլն։ Ակնկալվում է, որ նշված միջոցառումները կնպաստեն ոչ միայն նրանց հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև ինքնաճանաչման, ինքնաարտահայտման և ինքնագնահատման հմտությունների, ինքնուրույնության մշակմանը[5]։

[5] Ասատրյան Զ., Տարրական կրթության մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017, էջ 63-65։

3.2 Հաղորդակցումը տարրական դպրոցում

Տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական կոմպետենտության կարևորագույն բաղադրիչներից է մանկավարժական հաղորդակցումը:

Ժամանակակից ուսուցիչը լուծում է բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք պահանջում են ինչպես մասնագիտական գիտելիքներ, այնպես էլ արժեհամակարգ՝ և՛ անձնային, և՛ մասնագիտական: Նոր կրթության բովանդակության, նոր դասավանդման ձևերի և մեթոդների, դաստիարակության նոր, արդյունավետ ձևերի յուրացումը, մարդասիրական նոր հարացույցի իրականացումը, անհրաժեշտություն է առաջացրել արագ արձագանքելու դրանց՝ նպաստելով անձի ձևավորմանը, որը պետք է ինքնահիրացվի այդ հասարակության մեջ:

Մանկավարժական հաղորդակցումն ունի նոր բնութագրիչներ, ինչպես նաև յուրահատկություններ. մի կողմից մանկավարժական հաղորդակցման գործընթացում փոխանցվում է մարդկության սոցիալ–պատմական փորձը, և համապատասխանաբար, վերջինիս հիմնական նպատակը այդ փորձի նպատակասլաց փոխանցումն է: Մյուս կողմից՝ տեղեկատվություն ստացողը հաղորդակցման միջոցով որպես կանոն՝ զարգացող, ձևավորվող անձն է: Մանկավարժի և սովորողի ճիշտ կազմակերպված երկխոսությամբ, կոմունիկատիվ կարողություններով է պայմանավորված, թե ինչպիսի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ կունենա, ինչպիսի սոցիալ–հոգեբանական բնութագրիչներ կունենա անհատը:

Տարրական դասարանների ուսուցիչն իրականացնում է բազմաթիվ մասնագիտական գործառույթներ, սակայն դրանցից կարևորագույններից է մանկավարժական հաղորդակցումը: Ճիշտ կազմակերպված մասնագիտական հաղորդակցման դերը մեծ է, քանի որ աշակերտի անձի զարգացման նկատմամբ ներգործության ուղղվածության մթնոլորտը ստեղծում է հենց ուսուցիչը: Եթե համեմատենք՝ ըստ կարևորության՝ մանկավարժական գործունեության և մանկավարժական հաղորդակցման դերերը, ապա երկրորդն ավելի կարևոր է: Այլ կերպ ասած, գիտելիքների փոխանցման գործընթացը երկրորդ պլան է մղվում այն մթնոլորտի հետ համեմատած, որը ստեղծում է ուսուցիչը, միտված աշակերտի անձի

զարգացմանը: Մանկավարժական հաղորդակցումը տարրական դասարանների ուսուցչի համար հիմնական մասնագիտական կոմպետենտություններից մեկն է, քանի որ ուսուցչի համար կարևորը պետք է լինի ոչ այնքան գիտելիքների հաղորդումը, որքան կրտսեր դպրոցականի անձի զարգացումը: Ըստ Վ. Յու. Պիտյուկովի՝ մանկավարժական հաղորդակցումը այս տեսանկյունից ունենում է հետևյալ գործառույթները՝ երեխայի ներգրավումը կամ «բացահայտումը» հաղորդակցման մեջ: Այս դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է մի կողմից ստեղծել սովորողի համար հարմարավետ պայմաններ դասի ժամանակ, դպրոցում, դասարանում, արտադասարանական պարապմունքների ընթացքում: Դասարանում երեխայի զարգացումը տեղի է ունենում առավել ակտիվ. նրանք առանց վախենալու, անկաշկանդ դրսևորում են իրենց, չեն վախենում առանց բարդույթների ծաղրի ենթարկվելուց և չընկալվելուց ուսուցչի կողմից: Մյուս կողմից, առանց այս գործառույթի հնարավոր է բացահայտել երեխայի վերաբերմունքը՝ և ուսուցիչը հարկադրաբար պետք է հաշվի նստի երեխայի վարքագծային դրսևորումների հետ, որոնք կարող են ունենալ սուբյեկտիվ բնույթ և թելադրված լինել թաքնված մոտիվներով:

Մանկավարժական հաղորդակցման երկրորդ գործառույթն էմպաթիան է, որը բացահայտվում է ուսուցչի և սովորողի համագործակցության գործընթացի վերլուծության արդյունքում: Ուսուցիչը, երեխային ապրումակցելով, օգնում է նրան հաղթահարելու այն դժվարությունները, որոնք երեխան կարող է ունենալ հաղորդակցման ընթացքում: Երրորդ գործառույթը՝ մանկավարժական հաղորդակցման ընթացքում երեխային առաջնություն տալն է: Դա պետք է դիտարկվի ոչ թե երեխայի գնահատականի բարձրացումը, այլ որպես նրա տարիքային արժեքային նորագոյացումների խթանում: Մանկավարժական տեսանկյունից անտեղյակ ծնողները միշտ էլ կիրառում են այս գործառույթը՝ երեխաներին քաջալերելու համար, ինչը խթանում է նրանց կատարած դրական գործողությունները: Պիտյուկովը պնդում է, որ մանկավարժական հաղորդակցման այս երեք գործառույթների բացակայության պատճառով է, որ առաջին դասարանցիները մեծ ուրախությամբ և ցանկությամբ մուտք գործելով դպրոց՝ շատ արագ հիասթափվում են, չեն ցանկանում հաճախել դպրոց, քանի որ

մանկավարժական հաղորդակցումը սկսվում և ավարտվում է դասի ժամանակ գիտելիքների փոխանցմամբ:

Ժամանակակից տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական գիտելիքների համակարգի մեջ ընդգրկվում են հաղորդակցման կառուցվածքի մասին հետևյալ պատկերացումները.

1. հաղորդակցական խնդիրները, որոնք առաջադրում է ուսուցիչը (հաղորդակցման մոտիվացիոն ոլորտը),

2. հաղորդակցման միջոցները, այսինքն՝ հաղորդակցման արտահայտման միջոցները, ոճերը, հաղորդման մեջ կիրառվող դիրքորոշումները, դերերը (հաղորդակցման տեխնիկայի գործառնական կողմը),

3. հաղորդակցման ընթացքի և արդյունքների մասին ուսուցչի ինքնավերլուծությունը:

Կոմունիկատիվ ընդունակություններ ունեցող ուսուցիչը հաճույք է ստանում աշակերտների հետ հաղորդակցման, շփման գործընթացից: Մանկավարժական հաղորդակցումը (աշխատանքային կամ միջանձնային) անընդհատ, երկարատև, հուզական, շատ հաճախ աղմկոտ իրավիճակում ընթացող շփում է, առավելապես կրտսեր դասարանների ուսուցչի համար: Այդպիսի հաղորդակցումը լինում է հոգնեցնող, սակայն կոմունիկատիվ օժտվա ծություն ունեցող ուսուցիչը չի հոգնում. նա ունակ է աշխատելու աղմկոտ իրավիճակում, բովանդակային հաղորդակցման մեջ մտնելով աշակերտների հետ: Կոմունիկատիվ որակներ չունեցող ուսուցիչը շուտ հոգնում է աշակերտների հետ շփումից, դանդաղ է վերականգնվում, սկսում է նյարդայնանալ և տառապել: Կոմունիկատիվ ընդունակությունները 3 տարրերի ամբողջություն է. հաղորդակցման պահանջ, դրական, լավ հուզական ինքնազգացողություն հաղորդակցման ընթացքում և դրանից հետո կոմունիկատիվ կարողությունների և հմտությունների համակարգ ձևավորվածություն՝ ժամանակի զգացողություն, հարաբերություններ, կոմունիկատիվ իրավիճակ[6]:

[6] «Մանկավարժական միտք» հանդես, 2012, 3-4, էջ 51-55:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով «Մանկավարժի գործունեությունը տարրական դպրոցում» թեման՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

- ժամանակակից ուսուցչին ներկայացվող առաջնահերթ պահանջներից է մասնագիտական գիտելիքների և մանկավարժական կարողությունների առկայությունը, ապա տարրական դպրոցի ուսուցչի համար առաջնային են նրա անձնային որակները, երեխաների նկատմամբ սերը, հաղորդակցական և համագործակցային կարողությունները:
- Դասվարի համար առաջին հերթին կարևոր է կրտսեր դպրոցական տարիքի ինքնատիպության, երեխայի կյանքի սոցիալական և մշակութային առանձնահատկությունների, նրա ներաշխարհի բարդության և ոչ միանշանակ լինելու պարագան հաշվի առնելը:
- Մանկավարժական հաղորդակցումն իր խնդիրներով պետք է լինի հուզականորեն հարմարավետ և նպաստի անձնային զարգացմանը: Կարևոր է ստեղծել հոգեբանական անվտանգության մթնոլորտ, օգնել ուրիշին կողմնորոշվելու իր խնդիրներում և կարողանալու նրանցից ելք գտնել, ընդունել մարդուն իր իսկ խնդիրներով և առանձնահատկություններով, որոնք նման չեն ուրիշներին, ստեղծելու պայմաններ յուրաքանչյուր մարդու անհատականության բացահայտման համար և այլն:
- Աներկբա է, որ տարրական դպրոցի ուսուցիչն աշակերտի համար հեղինակություն է, իսկ նրա խոսքը՝ օրենք: Սա էլ ավելի է բարձրացնում ուսուցչի պատասխանատվությունը սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում:
- Մանկավարժական գործընթացի կառավարումը նախևառաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յ. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2005, 456 էջ:
2. Ասատրյան Զ., Տարրական կրթության մանկավարժություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2017, 160 էջ:
3. Գյուլամիրյան Զ., Խաղալով սովորենք, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2009, 80 էջ:
4. Հակոբյան Ա. Ա., Մանավարժական գործունեության հիմունքներ, Դասախոսությունների ժողովածու: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2017, 140 էջ:
5. «Մանկավարժական միտք» հանդես, 2012, 3-4, 208 էջ:
6. «Մխիթար-Գոշ» գիտամեթոդական հոդվածներ, 2020/ N2, 408 էջ: